# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 07.06.2018Թ. NԳՀԾՁԲ- ԱԻՆ-18/21 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան <<13 >> <<12 >> 2018թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ. Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից /այսուհետ՝ Կողմեր/, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին՝

1. Հիմք ընդունելով Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության չի վերացել ծառայության օգտագործման պահանջը և **07.06.2018թ. NԳՀԾՁԲ- ԱԻՆ-18/21 ծածկագրով պայմանագրի** 7.6 կետը Կողմերը համաձայնվեցին Պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգել 30 օրացույցային օրով մինչև 14.01.2019թ.:

1.1 Հաշվի առնելով, որ NԳՀԾՁԲ- ԱԻՆ-18/21 ծածկագրով պայմանագրի վճարումը պետք է կատարվի 2018թ. բյուջետային տարում, իսկ կատարման ժամկետը տեղափոխվում է հաջորդող բյուջետային տարի **Պատվիրատուն պայմանագրի չկատարած մասը՝ 39 000 000 (երեսունինը միլիոն) ՀՀ դրամը համապատասխան բանկային երաշխիքի դեպքում փոխանցում է Կատարողի հաշվին, որպես կանխավճար:**

1.2 Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2 .Պայմանագրի մյուս բոլոր կետերով Կողմերի պարտավորությունները մնում են անփոփոխ.

3. Համաձայնագիրը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը, կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| | |
|---|---|
| Արտակարգ իրավիճակների նախարարություն | << Մ-Բի-Ռ>> ՍՊԸ |
| ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8 | ք. Երևան, Մյասնիկյան 22/4 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | « Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011001352 | Հ/Հ 220083335012000 |
| ՀՎՀՀ 00153247 | ՀՎՀՀ 08417829 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն՝ |
| Վ. Օհանյան | Վ.Բաղդասարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |